## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Շաքի բնակավայրում իրականացնել տնտեսական գոտու կառուցապատման աշխատանքներ: Տնտեսական գոտու կառուցման արդյունքում պլանավորվում է կառուցել հեղուկ գազի ավտոմոբիլային լցակայան և ավտոմեքենաների վերանորոգման արհեստանոցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական գոտու կառուցումից հետո համայնքում կստեղծվեն նոր, թվով 5 աշխատատեղեր և կկատարվի 30-40մլն դրամ կապիտալ ներդրումներ՝ ուստի գոտու կառուցապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաքի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերից 0.3000հա հողամասը փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

26.02.2020թ.

---

## ՏԵՂԵԿԱՆՔ

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

26.02.2020թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի
ղեկավար__________Ա.Սարգսյան
<<____>>_____________2020թ.

# ՍԽԵՄԱ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնք Շաքի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող նպատակային նշանակությունը Գյուղատնտեսական (գործառնական նշանակությունը գյուղ այլ հողատեսք) Բնակավայրերի (գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) կատեգորիա փոխադրվող 0.3000 հա հողամասի

Մ1:5000







0.3000հա

| Շրջադարձային կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Կողմի երկ. մ |
|---|---|---|---|
| 1 | 8585300.8397 | 4383094.1715 | 55.34 |
| 2 | 8585304.2864 | 4383149.4019 | 64.23 |
| 3 | 8585368.5212 | 4383149.4019 | 28.42 |
| 4 | 8585382.8417 | 4383124.8515 | 87.55 |
| 5 | 8585300.8397 | 4383094.1715 | |

| 1 | փոխադրվող տարածք 0.3000 հա |
|---|---|

20.01.2020թ.

կատարող__________Ա.Հովհաննիսյան

Լիցենզիա՝ Որակավորման վկայական 0242 տրված 29.10.2012

<<Գոլդն Լյուքս>>ՍՊԸ